ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 19 » մայիս 2026թ. No 2835 - Ա

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՍՏԱԴԱ ԱՐՑՆԱՅՄԻՏԵԼ ԱԳ, ՍՏԱԴԱՇՏՐԱՍԵ 2-18, Դ-61118 ԲԱԴ ՎԻԼԲԵԼ- ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ՈՒՐՍԱՖԱՐՄ ԱՐՑՆԱՅՄԻՏԵԼ ԳՄԲՀ, ԻՆԴՈՒՍՏՐԻՇՏՐԱՍԵ 66129 ՍԱՐԲՐՈՒԿԵՆ, ԳԵՐՄԱՆԻԱ- ԲԱԼՔ ԱՐՏԱԴՐՈՂ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ, ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՍՏԱԴԱ ԱՐՑՆԱՅՄԻՏԵԼ ԱԳ, ՍՏԱԴԱՇՏՐԱՍԵ 2-18, Դ-61118 ԲԱԴ ՎԻԼԲԵԼ, ԳԵՐՄԱՆԻԱ «ՍՆՈՒՊ ՔՍԻԼՈՄԵՏԱԶՈԼԻՆ (ՔՍԻԼՈՄԵՏԱԶՈԼԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ) ՑՈՂԱՇԻԹ ՔԹԻ 1ՄԳ/ՄԼ; ՊԼԱՍՏԻԿԵ ՍՐՎԱԿ 15ՄԼ (150 ԴԵՂԱՉԱՓ)» ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐՊԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ հետգրանցումային փոփոխությունների իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպության կողմից տրված Գերմանիայի ՍՏԱԴԱ Արցնայմիտել ԱԳ, Ստադաշտրասե 2-18, Դ-61118 Բադ Վիլբել- բաց թողնման հսկող, Ուրսաֆարմ Արցնայմիտել ԳմբՀ, Ինդուստրիշտրասե 66129 Սարբրուկեն, Գերմանիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ ՍՏԱԴԱ Արցնայմիտել ԱԳ, Ստադաշտրասե 2-18, Դ-61118 Բադ Վիլբել, Գերմանիա «Սնուպ քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) ցողաշիթ քթի 1մգ/մլ; պլաստիկե սրվակ 15մլ (150 դեղաչափ)» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ ЛП-N-002752-ГП-АМ առ 29.04.2026թ. բացասական եզրակացության համաձայն՝ հայտը ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով ռեֆերենտ երկրի կողմից տրված բացասական եզրակացությունը (իրավական հիմք՝ 07.11.2025 №25-6-4343891/Изм/ЗД/ЭД):

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 58-րդ կետի՝ դեղի հետգրանցումային փոփոխություններն մերժելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 58-րդ կետը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Գերմանիայի ՍՏԱԴԱ Արցնայմիտել ԱԳ, Ստադաշտրասե 2-18, Դ-61118 Բադ Վիլբել- բաց թողնման հսկող, Ուրսաֆարմ Արցնայմիտել ԳմբՀ, Ինդուստրիշտրասե 66129 Սարբրուկեն, Գերմանիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ ՍՏԱԴԱ Արցնայմիտել ԱԳ, Ստադաշտրասե 2-18, Դ-61118 Բադ Վիլբել, Գերմանիա «Սնուպ քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) ցողաշիթ քթի 1մգ/մլ; պլաստիկե սրվակ 15մլ (150 դեղաչափ)» դեղի հետգրանցումային փոփոխությունների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Recoverable Signature

X

Signed by: GASPARYAN ARMEN 2408830443